Հարցազրույց՝ վերադարձից հետո

ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնն այս տարի իր հերթական նիստն անցկացրեց Սինգապուրում: Միջոցառումը ներառում էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնի միջազգային ցանցի ազգային բաժանմունքների վարիչների տարեկան խորհրդակցություն, միջազգային կոնֆերանս, բիոէթիկայի դասընթաց (կուրսեր)՝ բիոէթիկա դասավանդողների համար:

Զեկուցումներով հանդես եկան մասնագետներ ԱՄՆ-ից, Կանադայից, Արգենտինայից, Ավստրիայից, Թայվանից, Իտալիայից, Ավստրալիայից, Չինաստանից և այլ երկրներից:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագետ և ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային ցանցի հայկական բաժանմունքի վարիչ՝ դոցենտ Սուսաննա Դավթյանը հրավիրված էր որպես հիմնական զեկուցող մասնակցելու վերոնշյալ միջոցառումներին, ոչ միայն կարդալու երկու զեկուցում (մեկը՝ որպես վարիչ, մյուսը որպես փորձագետ), այլև որպես նախագահ վարելու դասավանդման մեթոդաբանությանը նվիրված նիստը:

- Ինչի՞ մասին էր Ձեր զեկուցումն այս անգամ:

- Այն վերաբերում էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ «Մարդու իրավունքների և բիոէթիկայի մասին» հռչակագրի հիման վրա ՅՈՒՆԵՍԿՕ-ում մշակված ուսումնական ծրագրի իմ կողմից փորձարկման (թեստավորման) արդյունքներին:

Զեկուցումս առաջացրեց աշխույժ քննարկումների մթնոլորտ՝ ոչ միայն բարձր գնահատվելով այդ բնագավառի ճանաչված և միջազգային բարձր վարկանիշ ունեցող մասնագետների կողմից, այլև առաջարկություն արվեց այն հրատարակել առանձին աշխատության տեսքով՝ Փարիզում և Իսրայելում:

Սա հաջողություն էր, քանզի նախկին հավաքներին ես միայն գովեստի էի արժանացել և արդյունքում նշանակվել գիտական նստաշրջանի նախագահ:

Բայց հրատարակել իմ զեկուցումը, որպես ինքնուրույն աշխատանք՝ դեռ չէր եղել: Ի դեպ՝ սա միակ զեկույցն էր, որ նման առաջարկի արժանացավ:

- Ի՞նչ են տալիս Ձեզ այդ գիտաժողովները:

- Դրանք առիթ են տալիս մեկ անգամ ևս վերանայելու գիտելիքներիս պաշարը, համեմատելու այն այլոց հետ, ներկայացնելու գաղափարներ, լսելու նրանցը, տեղեկանալու այն ամենին, ինչը դեռ չի մասսայականացվել, զանգվածային հրապարակման չի ենթարկվել: Մտքեր են, առաջարկներ, որոնք տեղում քննարկվում են, վերլուծվում, արժեւորվում, մերժվում կամ ընդունվում, և այդ բոլորի մեջ դու բովվում ես: Նորանոր գաղափարներով, մտքերով կամ հնի թարմացված տարբերակով վերադառնում ես և **անելու շա՜տ բան ես տեսնում**: Ազդակ է, խթան, որ է՛լ ավելի լավ աշխատես, որովհետև ի վերջո մեկ տարի հետո պետք է պատասխան տաս, հաշվետու լինես ՅՈՒՆԵՍԿՕ-ին՝ կատարածդ աշխատանքի համար:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն հո հենց այնպես չի՞ վճարի փորձագետին գիտական հավաքներին մասնակցելու համար: Այնքա՜ն մասնակիցներ կան, որ այսօր նույնիսկ հրավեր էլ չեն ստանում, ուր մնաց՝ հրավիրվեն որպես հիմնական զեկուցող:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնի վարիչը չի զլանում ամեն անգամ նշել. «Դուք ներկայացնում եք ձեր երկիրը, ձեր երկրի գիտական, կրթական ձեռքբերումները, առանձնահատկությունները: Սա շատ լավ է մշակութային բազմազանություններին տեղյակ լինելու համար: Սակայն ձեր երկրներում մի մոռացեք, որ դուք ներկայացնում եք ՅՈՒՆԵՍԿՕ-ն: Եվ ձեր խնդիրն է լսելի դարձնել, տեղ հասցնել ՅՈՒՆԵՍԿՕ-ի հանձնարարականները և պահանջները: Սա է ձեր առաքելությունը և պարտավորությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի առջև»:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի գիտաժողովներին մասնակցելը շատ ծանր, հագեցած, անգամ հոգնեցուցիչ գործընթաց է: Շատ կարևոր է, երբ ոչ միայն ֆիզիկական ներկայությունդ ես ապահովում, այլև ակտիվ մասնակցություն ես ունենում՝ դիտողություններ և առաջարկություններ անելով, կարծիքդ արտահայտելով, համալսարանդ, երկիրդ արժանապատվորեն ու հպարտությամբ ներկայացնելով:

Որևէ բան աչքներից չի վրիպում, ահա ինչու ուրախ եմ, որ արդեն երկու հրավերի առաջարկություն եմ ստացել՝ դարձյալ հրավիրող կողմի հոգածությամբ և, ճիշտն ասած, ամեն անգամ ստանալով հրավեր՝ սիրտս ջերմանում է, որովհետև առիթ ու պատիվ եմ ունենալու լսելու, տեսնելու զարգացած, կայացած այնպիսի անհատականությունների՝ ինպիսիք են պրոֆեսորներ Քարմին, Բենյաքարը, Պոլարը, Լի Ձեն, Համիդին, Ֆու Չանգը, Վաթադը և այլոք:

«Բիոէթիկա» կարդացողին խիստ շրջանակների մեջ չեն դնում, ՅՈՒՆԵՍԿՕ-ն առաջարկում է՝ ինչ կարդալ և ինչպես, սակայն մեծ ազատություն է տալիս դասխոսին (խոսքը, իհարկե, փորձագետի մասին է):

Ինչ ասել և ինչպես ասել, որ այսօրվա ուսանողը քեզ լսի, ընկալի, խորհրդածի, մտածի քո ասածների մասին, այլ ոչ թե անգիր անի, մի կերպ ազատվի այդ ամբիոնից և այդ դասախոսից: Մտածել սովորեցնել է պետք, ոչ թե պատրաստի դեղատոմսեր տալ՝ անգիր անելու մղելով: Ոչ թե պահանջել ինչ-որ սահմանումներ անգիր անել, որ հետո կյանքում չի էլ հիշվելու, այլ օրի նակներով, իրադարձությունների վերլուծություններով սովորեցնել, ազատ թողնել ուսանողին՝ իր անձը, վարքագիծը կողքից նայողի հայացքով, ինքնաքննադատաբար վերլուծելու ունակություն դաստիարակել: Դասախոսը իր օրինակով, իր բազմակողմանի զարգացածությամբ, նրբազգացմամբ, վարքագծով պետք է դաստիարակի, ոչ թե սոսկ խոսքով:

Եվ եթե գիտատեխնիկական առաջընթացը իր կողքին չունի բարոյական առաջընթաց, եթե խիղճը, սերը, զգացմունքը ոտնահարվեն, ապա ոչ միայն ոչնչի չենք հասնի, այլև մարդկությունը կկանգնի կործանման եզրին:

Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

Հ. Գ.

Առաջարկում ենք ՈՒԳԸ անդամներին, ասպիրանտ հայցորդներին, կորդինատորներին, երիտասարդ դասախոսներին, ովքեր ձգտում և ցանկություն ունեն խորացնելու իրենց գիտելիքները բիոէթիկայի բնագավառում, գրի առնել և հասարակագիտական ամբիոն ներկայացնել բժշկական պրակտիկայից իրենց հայտնի դիլեմաներ, իրադրությունների վերլուծություններ, որոնք կգումարվեն աշխարհի տարբեր ծայրերից արդեն հավաքվածներին և կհրատարակվեն ԵՊԲՀ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի անվան տակ: Վստահեցնում ենք, որ դրանով կհարստացնեք ձեր փորձը և ավելի պատրաստ, տեղյակ ու գիտակ կդիմավորեք բժշկական պրակտիկայում հանդիպող անսապասելի իրադրությունները:

UNESCO Chair in Bioethics

The expert of UNESCO and the Head of the Armenian Unit of the International Network of UNESCO Chair in Bioethics, Associate Prof. of Philosophy department of YSMU S. Davtyan participated in the International Conference and Courses on Bioethics organized by the UNESCO Chair in Bioethics, which was held in Singapore, 22-30 May, 2011. Mrs. Davtyan was invited as a leading speaker and she was appointed as a chair of teaching methodology of scientific session.